«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Դաստիարակ՝Լենա Բրուտյան

Մանկապարտեզ՝ «Բերդի թիվ 3» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Բաժին 1.Դաստիարակության երեխայակենտրոն ուսուցում.....4

1.1Ուսուցման փոխգործուն մեթոդներ.....6

1.2Ինտեգրված ուսուցում.....9

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԲԱԺԻՆ 2.Հետազոտական աշխատանքի նպատակը,խնդիրները,ընթացքը.....10

2.1Ինտեգրված պարապմունքի պլան.....10

2.2Ինտերակտիվ պարապմունքի պլան.....14

Եզրակացություն.....16

Գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման գործընթացը փոխներգործություն է,որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով,երեխաների և մանկավարժների փոխհարաբերություններով:Հաղորդակցման ոճը բխում է հասարակության կողմից ներկայացվող պահանջներից,կրթական համակարգի ռազմավարությունից և գերակա խնդիրներից:Մանկավարժն պարտավոր է կրթել,դաստիարակել,ուսուցանել,զարգացնել

երեխային: Նախադպրոցական տարիքում դրվում են երեխայի համակողմանի զարգացման հիմքերը: Կյանքի այս շրջափուլում են իրականացվում նաև մարդասիրական դաստիարակության հիմնական նպատակները՝ երեխային ընդունել որպես սեփական կենսագործունեության ակտիվ սուբյեկտ,բնության և մշակույթի տեսանկյունից նպաստավոր ուղղորդում տալ նրա հնարավորություններին և զարգացնել ինքնիրացման,ինքնազարգացման և ինքնապաշտպանության տարրական ձևերին տիրապետելու հմտություններ:

Հիմնական շեշտը դրվում է նախադպրոցականի բարոյական կերպարի՝ որպես անձի զարգացման հիմնական նախադրյալի,ձևավորման կարևորության վրա:Նշվում են երեխայի անձի զարգացման սկզբունքների հիմնական դրույթները՝ կենսական ինքնորոշման,երեխայի կողմից սեփական ուժերի իրացման,հիմնական անձնային որակների,աշխարհայացքի,աշխարհի,և ինքն իր նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորման,սոցիալական ուղղվածության,կամայական վարքի զարգացման վերաբերյալ:

Յուրաքանչյուր երեխա առանձին անհատ է,տարբեր կարողություններով:Մանկավարժի համար առաջնահերթ է,հաշվի առնել երեխայի ուժեղ կողմը,ստեղծել տարբեր խաղային իրավիճակներ,դիդակտիկ խաղեր,ինտեգրված պարապմունքներ,ուրախ մթնոլորտ:Ինտեգրված պարապմունքների միջոցով,կապն այլ առարկաների հետ,լավ է անդրադառնում երեխայի հետագա մտածողության վրա:

Հետազոտական աշխատանքի նպատակն է նշել ինտեգրված պարապմունքների ձևերը կարողունակահեն կրթական մոտեցման հաատեքստում :

: Հետազոտական աշխատանքի խնդիրն է՝ ծանոթացնել փոխգործուն և ինտեգրված պարապմունքներին:

Բաժին 1

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեխայի բարոյական կերպարի ձևավորումն անձի զարգացման կարևորագույն ոլորտներից է,ինչին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հատկապես նախադպրոցական տարիքում:Այս շրջանում երեխաները տարբեր հակումներ են դրսևորում:Երեխայի անհատականության կայացմանը սատարելը ավելի բարդ և կարևոր առաքելություն է,քան նրան

օգնելը հաջողակ լինելու կրթական որոշակի ոլորտում:Անձի դաստիարակությունը բարդ ու երկարատև գործընթաց է,և իրականացվում է մանկավարժական նուրբ տեխնոլոգիաների կիրառմամբ:

Առաջին՝ օգնության ռազմավարություն:Այն նախատեսում է ոչ այնքան մանկավարժական ժամանակակից մեթոդների ու մոտեցումների ներդրում,որքան ամբողջ կյանքի բարեփոխմանը միտված,անհատի կենսագործունեության սոցիալական կազմակերպում,ինչը կօգնի նրան գտնելու իր տեղը կյանքում:Մանկավարժական այն մեթոդները,որ օրգանապես ներառված են դաստիարակության և ուսուցման հարմարվողական առարկայական մոդելի մեջ,չեն շոշափում երեխայի շահերը:Տվյալ պարագայում մանկավարժը վերածվում է երեխայի կենսակերպի սոցիալական<<ճարտարապետի>>,որը նրա հետ համագործակցության ժամանակ օգնում է ճիշտ ինքնորոշվել:

Երկրորդ՝ մանկավարժի ակտիվություն:Սա ենթադրում է տվյալ իրավիճակում կոնկրետ երեխայի նկատմամբ հստակ գործողությունների ստեղծագործական փնտրտուք:Այսինքն՝ դաստիարակչական աշխատանքի մեթոդիկան յուրաքանչյուր երեխայի հետ կոնկրետ իրավիճակում աշխատելիս ծնվում է նորից,քանի որ դաստիարակը,իրացնելով անհատական մոտեցում,անհրաժեշտության դեպքում թարմացնում է ցանկացած տեխնոլոգիա:

Նախադպրոցականների մարդասիրական դաստիարակության ելկետային դրույթն այն մոտեցումն է,ըստ որի՝ աճող անհատը գիտակից և գործունյա էակ է,որն ուրիշների հետ համակեցության պայմաններում ունակ է և ձգտում է վերափոխման:Մարդասիրական դաստիարակության հիմնական նպատակը երեխայի մեջ,բնության ներդաշնակության և մշակույթի տեսանկյունից նպատակահարմար լինելու,որպես սեփական կենսագործունեության ակտիվ սուբյեկտ հանդես գալու,ինքնիրացման,ինքնահաստատման և ինքնազարգացման տարրական ձևերին տիրապետելու հմտության ձևավորումն է:

Մանկության փուլում փոքրիկը մեծահասակի օգնությամբ ձեռք է բերում անհատական մշակույթի հիմունքներ:Բնության հանդեպ արժեքային վերաբերմունքի ձևավորումը նպաստում է նախադպրոցականի բնապահպանական գիտակցության և բնության նկատմամբ նպատակահարմար վարքի կայացմանը:

Ճանաչողական ակտիվության կարևոր աղբյուր է աճող անհատի ստեղծագործական փորձը,որն ապահովում է ոչ միայն տրվածի յուրացումը,այլև դրա վերափոխումը:

Նախադպրոցականների ստեղծագործական փորձի իրացումը ենթադրում է այնպիսի բարենպաստ պայմանների ստեղծում,որոնք իրենց մեջ համադրում են դաստիարակության և ուսուցման՝ անհատականության և տարբերակման սկզբունքները:Ինչքան բազմազան լինի զարգացնող միջավայրը,այնքան հեշտ կլինի աճող անհատի ինքնուրույնության,ճանաչողական ակտիվության և ստեղծագործական ունակություններ դրսևորումը:Երեխաների դաստիարակության և ուսուցման տարբերակված մոտեցման ներդրումը մանկավրժներին թույլ կտա օգտագործել յուրաքանչյուր կոնկրետ երեխայի անհատական փորձը:

Յուրաքանչյուր մանկավարժ,դաստիարակ պարտավոր է՝ որակյալ կրթությամբ ապահովել յուրաքանչյուր երեխայի:Կրթված և զարգացած երեխան դառնում է ավելի ինքնավստահ կյանքի բոլոր բնագավառներում:

Մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից մեկը՝ ինտեգրված կրթությունն է,որը կապված է նախկինում անհամեմատելի մասերի միավորման հետ:Այս գործընթացը կարող է տեղի ունենալ ինչպես գոյություն ունեցող համակարգում,այնպես էլ նոր համակարգի շրջանակներում:Ինտեգրման գործընթացի էությունը համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի մեջ որակական փոփոխությունն է:

Մանկավարժության ինտեգրման խնդիրները ուսումնասիրվում են տարբեր բնագավառներում՝ բազմաթիվ հետազոտողների աշխատանքներում:Վ.Վ Կրաևսկու,Ա.Վ Պետրովսկու,Ն.Ֆ Թալինյանի ստեղծագործություններում հստակ երևում է այլ գիտությունների հետ մանկավարժության ինտեգրման խնդիրների կապը:Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր բաղադրիչների համակարգի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ:Այն առաջատար է առաջադիմության զարգացման մեջ,որոշելով դասընթացի բովանդակությունը,ձևերը և մեթոդները:Հավատարիմ մնալով ընտրված մեթոդաբանական դիրքորոշումներին,գիտնականները բացահայտում են մի շարք հասկացություններ՝ ինտեգրման գործընթաց,ինտեգրման սկզբունք,ինտեգրման մոտեցում:

1.1Ուսուցման փոխգործուն մեթոդներ

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ:Մեթոդը նպատակին հասնելու միջոց է:

Դիդակտիկ մեթոդն ուսուցման ընթացքում հաջորդաբար կիրառվող միջոցների համակարգ է՝ուղղված դիդակտիկ խնդրի լուծմանը:Ուսուցման մեթոդը բաղկացած է ուսուցման հնարներից,որոնք միտված են ավելի նեղ ուսումնական խնդիրների լուծմանը:Մեթոդն արդյունավետ է,երբ մեթոդին կից օգտագործվող հնարները բազմազան են:

Ուսուցման մեթոդների ավանդական դասակարգումը հիմնված է գիտելիքների ձեռքբերման աղբյուրների վրա,որոնց համաձայն մեթոդները բաժանվում են երեք խմբի.

1.խոսքային/գիտելիքի աղբյուրը խոսքն է/

2.դիտողական/գիտելիքը ձեռք է բերվում դիտողականության շնորհիվ/

3.գործնական/գիտելիքը պրակտիկ փորձի արդյունք է/

Ներկայումս նախադպրոցական դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ խաղային,գործնական,ակտիվ ուսուցման մեթոդները:Վերջիններս հայտնի են որպես ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր

հուզականությամբ,երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով:Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները:Հատուկ ուսուցմանն են ուղղված դիդակտիկ խաղերը,որոնք կատարում են երկու կարևոր գործառույթ.խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացմանը,նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և կատարելագործմանը:

Զարգացման հրաշալ մեթոդ է խաղի յուրաքանչյուր տեսակ:

Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները,փորձերը,հետազոտումը և մոդելավորումը:Փորձերի և փորձարարության դերն այսօր դիդակտիկայում անգնահատելի է,այն պրոբլեմային ուսուցման հիմնական եղանակն է:

Մոդելավորումը համեմատաբար նոր մեթոդ է,որի հիմքում ընկած է ուսուցանվող նյութի ներկայացումը պայմանական նմուշի ձևով:Մոդելը ուսուցանվող օբյեկտի բոլոր հատկությունները ամփոփոխ պատկերն է՝ներկայացված փոխարինման սկզբունքով:Օրինակ,խմբասենյակը փոխարինվում է սենյակի հատակագծի մոդելով:Կամ հեքիաթը ներկայացվում է սխեմատիկ նկարի,պատկերագրի ձևով:

Նախադպրոցականի ուսուցման գործընթացում օգտագործվում են մոդելների հետևյալ ձևերը.

առարկայական մոդելներ՝ուսումնասիրվող առարկան պատկերող նկար կամ նմուշ-խաղալիք,

առարկայասխեմատիկ մոդելներ՝ուսումնասիրվող երևույթը բնութագրող ընդհանրացված պատկեր կամ սխեմա/օրինակ բնության օրագիրը,ուր բնության երևույթներն արտահայտվում են սիմվոլներով/,

վերացական մոդելներ՝սխեմաներ,դիագրամներ,պիկտոգրամներ/սխեմատիկ նկարների շարք/:Նման օրինակ է հեքիաթի մոդելավորումը,այն ընթերցվում է և բաժանվում տրամաբանական մասերի,դրանք երեխան վերնագրում է,որից հետո փորձում է նկարել յուրաքանչյուր մասը՝պատկերելով մասի ընդհանուր իմաստը:

Մոդելավորման մեթոդը ուսուցման հեռանկարային մեթոդներից է:

Ժամանակակից նախադպրոցական դիդակտիկայում իրենց հաստատուն տեղն են աստիճանաբար գրավում ակտիվ ուսուցման մեթոդները,որոնք հայտնի են որպես փոխներգործուն մեթոդներ:

Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են ազատ մտածելու,համարձակ կարծիք հայտնելու կարողությունների և տարածականության զարգացմանը,իմացության գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը:Դրանք խմբային մտավոր աշխատանքի եղանակներն են՝ուղղված համատեղ մտորումների և որոնումների քննարկմանը,ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

Ուսուցման փոխներգործուն մեթոդները համապատասխանում են անհատակողմնորոշիչ ուսուցման սկզբունքներին և կարող են նպատակաուղղված ծառայել նշված ուսուցման մոդելի խնդիրների լուծմանը:

Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի,երկխոսության մեջ մտնել ինչ որ մեկի կամ համակարգչի հետ:Այսինքն ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով:

inter-փոխադարձ

akt-գործողություն

Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առաջնայնությունը,հերակայությունը,ինչպես նաև մի տեսակի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ.

փոխազդեցությունը,փոխուսուցումը,

երեխայի ակտիվությունը,

համագործակցությունը,

ինքնարտահայտման խրախուսումը,

հետադարձ կապը:

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

-երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,

-ճանաչողական հետաքրքրությունների բացահայտումը,

-համագործակցային կարողությունների դրսևորումը,

-անհատական առանձնահատկությունների բացահայտումը,

-հաղորդակցական ունակությունների ձևավորումը,

-տրամաբանական մտածողության զարգացումը,

-վերլուծական կարողությունների ձևավորումը:

Այդուհանդերձ,չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր:Ցանկացած խումբ,պարապմունք եզակի է,անկրկնելի:Դաստիարակի խնդիրն է՝ ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատրաստել խմբասենյակն աշխատանքն սկսելուց առաջ:

Ցանկալի է,որ երեխաների նստելու դիրքը կամ աթոռների դասավորվածությունը նպաստեն դրան:Անհրաժեշտ պարագաները պետք է պատրաստել նախօրոք:

Աշխատանքում պետք է այս կամ այն կերպ ներգրավված լինեն բոլոր երեխաները:

Պետք է հոգալ երեխաների հոգեբանական պատրասվածության մասին:Երեխաների մոտ կաշկանդվածությունը,վարքի ավանդական ձևերը հաղթահարելու համար անչափ կարևոր է նրանց խրախուսելը՝ հնարավորություն ընձեռելով ,որ նրանք խորացնեն իրենց ընդունակությունները:

Ցանկալի չէ սովորողների մեծաքանակ խումբը:Եթե խումբը մեծաքանակ է,արդյունավետ է աշխատանքը կազմակերպել փոքր խմբերով,որ բոլորն արտահայտվելու հնարավորություն ունենան:

Հետևել ժամանակին:

Մանկապարտեզում կիրառվող փոխգործուն մեթոդներից են.

Մտքերի տարափ

Զրույց

Աշխատանք ենթախմբերով

Հարցեր ու հարցադրումներ

Իրավիճակի վերլուծություն

Դերային խաղ

1.2 Ինտեգրված ուսուցում

Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ,ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը,հետաքրքրասիրությունը,անմիջականությունը,զարմանքը,երևակայությունը և աշխատանքից էսթետիկական հաճույք ստանալը:Բոլոր երեխաները ունեն այս հատկանիշները փոքր հասակում,բայց հաճախ կորցնում են դրանք կյանքի առաջին տասնամյակում:Մինչդեռ այս հատկությունները կարևոր դեր են խաղում սովորելու գործընթացում:Այս նպատակին հասնելու ուղին ուսումնառությունը թեմատիկ դասերի միջոցով կազմակերպելն է:Թեմատիկ պարապմունքները կարևորում են գործունեության այն ձևերը,որոնք պահանջում են ինքնուրույն

մտածողություն,նախաձեռնություն,համագործակցություն,հնարամտություն,անձնական կարգապահություն,շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր,սոցիալական,հուզական,ֆիզիկական և էսթետիկական ոլորտների համակողմանի զարգացումը և չի կենտրոնանում մեկ՝ առանձնացված ոլորտի վրա,որն անբնական կլիներ երեխայի զարգացման համար:Բազմակողմանի զարգացած,ուսման մեջ հաջող երեխաները մեծանում են հոգատար,աջակցող միջավայրում:Թեմատիկ դասերի ժամանակ դաստիարակը գիտակցաբար այնպես է անում,որ երեխաները զգան մեծահասակների հոգատարությունը:Դաստիարակները,ծնողները սովորելու ընթացքում զրուցում են երեխաների հետ՝ նրանց ուշադրությունը կենտրոնացնելով նյութի բովանդակության վրա:Նրանք զարգացնում են երեխաների մտածողությունը աստիճանաբար ավելի ծավալուն և անկեղծ դարձող երկխոսությունների միջոցով:Այսպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և ինքնավստահություն է ներշնչում նոր ձեռք բերած գիտելիքները կիրառելու համար:

Թեմատիկ ուսուցումից բոլորն էլ շահում են:Ծնողները ներգրավվում են խմբում կատարվող տարբեր աշխատանքների մեջ և տեղյակ են,թե ինչ են անում իրենց երեխաները:Երեխաներն իրենց հերթին դառնում են գիտակ,ինքնատիպ մտածողներ,որոնց թույլ է տրվում նոր ձևերով դրսևորել իրենց գիտելիքները:

Երբ այսպիսի համալիր ուսուցումը մանրակրկիտ կերպով պլանավորում և իրականացվում է,արդյունքում դրսևորվում են երեխաների հետևյալ հատկանիշները.

-հոգատար են միմյանց նկատմամբ,

-հետաքրքիր մտավոր կապեր են ստեղծում,

-կատարելագործում են իրենց շփման և երկխոսության հմտությունները,

-ձևավորվում են որպես համայնք:

<u>ԲԱԺԻՆ 2.ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ</u>

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ:Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել,թե ինչպիսի արդյունավետություն կարող է ունենալ ինտեգրված ուսուցումը,կրթադաստիարակչական աշխատանքներ կազմակերպելիս:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ:Ուսուցման ինտեգրված և ինտերակտիվ մեթոդների բացահայտումն ու արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՄԻԶԻՆ ԽՄԲՈՒՄ:

2.1<<ԾԱՆՈԹԱՑՈՒՄ 3 ԹՎԻՆ և ԹՎԱՆՇԱՆԻՆ >>ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

ԹԵՄԱՆ՝ Ծանոթացում 3 թվին և թվանշանին

ՆՊԱՏԱԿ՝ Ձևավորել պատկերացումներ տրված թվի և թվանշանի մասին:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ՝ Կարողանա տարբերել 1 և 2, 2 և 3 առարկաներից բաղկացած խմբերը,թիվը կարողանա համապատասխանեցնել առարկաների քանակի հետ:

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Մաթեմատիկական կարողունակություն:

Անհրաժեշտ պարագաներ՝ 1,2,3 թվանշանով պատկերված մեծ և փոքր քարտեր,օղակներ,նապաստակներ,գազարներ,լուսացույց,խնձորներ,երկրաչափական պատկերներ,ալյուր,գունավոր թղթեր:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

_Երեխանե՛ր, մենք ո՞ր երկրաչափական պատկերների հետ ենք ծանոթացել:

-Երեխաներ-Գիտենք շրջանի,ուղղանկյան,քառակուսու և եռանկյան մասին:

-Դաստիարակ-իսկ որ՞ոնք են տվյալ երկրաչափական պատկերների հատկանիշները:

-Երեխաներ-Շրջանը չունի անկյուններ,գագաթներ,կողմեր,կարող է գլորվել:Քառակուսին ունի չորս կողմ,չորս անկյուն,չորս գագաթ,բոլոր կողմերն իրար հավասար են:Ուղղանկյունն ունի չորս կողմ,չորս անկյուն,չորս գագաթ,հավասար են հանդիպակած կողմերը:Եռանկյունն ունի երեք կողմ,երեք գագաթ,երեք անկյուն:

Դաստիարակ-իսկ ո՞ր թվանշանների հետ ենք ծանոթացել:

Երեխաներ-Ծանոթացել ենք 1,2 թվանշանների հետ:

Դաստիարակ-իսկ ո՞ր թվանշանն է զույգ,և ի՞նչ է նշանակում զույգ:

Երեխաներ-զույգ է 2 թվանշանը,զույգ նշանակում է բաժանել հավասար մասերի:

Այնուհետև դնել երկու օղակ և յուրաքանչյուրի մեջ դնել թվերը,հանձնարարել,որ թվերը համապատասխանեցնեն առարկաների քանակի հետ:

ՖԻԶԿՈՒԼՏԴԱԴԱՐ

Կատարել երաժշտությանը համապատասխան ծափերով շարժումներ:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Ներս է մտնում մեկ նապաստակ,և ասում որ,գայլը հարձակվել է իր,և ընկերների վրա,նրանք վախից փախել են անտառի տարբեր կողմեր,և խնդրում է որ երեխաները օգնեն գտնել նրանց:

Երեխաները փնտրում են,և գտնում մեկ նապաստակ,ձեռքին մեկ գազար:

Նապաստակ-երեխաներ,բայց ես էլի ընկեր ունեմ,այդ մեկը չի,խնդրում եմ կրկին օգնեք:

Երեխաները փնտրում են և գտնում մեկ նապաստակ՝ ձեռքին ևս մեկ գազար:

Դաստիարակ-երեխաներ հաշվենք և տեսնենք քանի նապաստակ դարձան նապաստակները:Դարձան 3 հատ:

Իսկ քանի գազար պետք է տանք նապաստակին,որպեսզի հավասարվի:(1)

Կա երեք գազար և երեք նապաստակ:Գազարներն ու նապաստակներն իրար հավասար են:

Բերել **3** թվանշանը:

Այնուհետև նապաստակի երաժշտության ներքո ցատկոտելով ճանապարհել նապաստակներին:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Դաստիարակ-երեխաներ 3 թվի մասին,մենք ո՞ր հեքիաթներում ենք տեսել կամ լսել:

Երեխաներ-տեսել ենք,երեք խոզուկների,երեք գլխանի վիշապի,երեք արջերի հեքիաթի մեջ:

Դաստիարակ-իսկ բոլոր հեքիաթների վերջում ի՞նչ է լինում:

Երեխաներ-բոլոր հեքիաթների վերջում ընկնում է երեք հատ խնձոր:

Երեք հատ լինում է նաև լուսացույցի գույները,երկրաչափական պատկերներից՝ եռանկյան կողմերը,գագաթներն ու անկյունները:

Այնուհետև երեխաները նստում են սեղանների շուրջ,յուրաքանչյուրի դիմաց դրվում է մեկ գունավոր թուղթ,փոքր թվային քարտ:Գունավոր թղթերի վրա մաղել ալյուր.և հանձնարարել,որ մատիկների միջոցով նկարել տվյալ թիվը:

Արդյունավետությունը:Պարապմունքի միջոցով երեխաները հասկացան 3 թվի ստացման գործընթացը:Կարողացան մատիկների միջոցով և հետաքրքիր ձևով ալյուրի վրա նկարել տրված թվերը:Ունեցան հետաքրքիր,բովանդակալից պարապմունք:

2023 11 29 11:03

2.2<<Բարեկիրթ վարք>>ինտերակտիվ ուսուցում

ԹԵՄԱՆ՝ ԲԱՐԵԿԻՐԹ ՎԱՐՔ

ՆՊԱՏԱԿ՝ Սովորեցնել տեղին օգտագործել բարեկիրթ արտահայտություններ՝ ներողություն,շնորհակալություն,ներողություն և այլն:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ՝ Կարողանա ցուցաբերել բարեկիրթ վարքագիծ:

ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Լեզվական և հաղորդակցական:

Անհրաժեշտ նյութեր՝ արջուկ:

Ընթացքը

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Տեղեկացնել,որ ունկնդրելու են Ս.Կապուտիկյանի <<Ինձ լավ լսիր,այ տիկնիկ>>բանաստեղծությունը:Երեխաներ պետք է ուշադիր լսեք,որ կարողանաք հասկանալ,թե ինչ է սովորեցնում աղջիկն իր տիկնիկին,որպեսզի դուք էլ սովորեցնեք արջուկին:Հետո զրուցել.

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Եկեք արջուկին սովորեցնենք բարեկիրթ վարքի կանոնները:

-Երբ առավոտյան արթնանում ենք,ի՞նչ ենք ասում մարդկանց:(Բարի լույս)

-Երբ հյուր եք գնում ի՞նչ եք ասում:(Բարև Ձեզ):

-Ինչպե՞ս եք բարևում մարդկանց:(Ժպիտով):

-Ի՞նչ բառերով են մարդիկ հրաժեշտ տալիս իրար:(Հաջողություն,մնաք բարով):

-Ինչպե՞ս կդիմես ընկերոջդ,եթե նրանից ինչ որ բան ես խնդրում:(Խնդրում եմ):

-Ի՞նչ ես ասում երբ խնդրանքդ կատարում են:(Շնորհակալություն):

ՖԻԶԿՈՒԼՏԴԱԴԱՐ

ԵՐԳՈՒՄ ԵՆՔ ԲԱՐԵԿԻՐԹ ԲԱՌԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԵՐԳ:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Կազմակերպել՝ <<Խառնաշփոթ>>դիդակտիկ խաղը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանգեցինք այն եզրակացության,որ

-Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի կրթվելու և դաստիարակվելու

-Ծրագրային նյութը պետք է մատչելի լինի բոլոր երեխաների համար

-Պետք է արժևորել անհատականության բացահայտմանն ուղղված երեխայակենտրոն զարգացնող միջավայրի ապահովման գործընթացը

-Առաջնահերթություն տալ երեխայի խոսքին,տրամաբանությանը,մտավոր և գեղարվեստական զարգացմանը

-Ինտեգրված պարապմունքների միջոցով երեխաները դառնում են ավելի ակտիվ և ցուցաբերում են մեծ առաջադիմություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հ.Միտոյան,Լ.Սմբատյան,Լ.Սարգսյան՝ <<Ոսումնամեթոդական ձեռնարկ>>Երևան 2013:

2.<<Նախաշավիղ>>2009:

3.<<Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք>>: